Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳՃ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 12. Գեղարքունիքի մարզ -ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 15.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 50 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Կատարվել է 15 շահառուների կարիքի վերագնահատում, որի արդյունքում իրականացվել է 2 դեպքի վարում (համայնքապետարանի կողմից շահառուին ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, վերափաստագրման կազմակերպում) և 3 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
    - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 16 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 17 շահառուներ ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներում:
    - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 16 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող երգ-երաժշտության, գեղարվեստական գրականության, ասմունքի, տեղեկատվական, շյուղագործության և ձեռագործության խմբակներին:
    - Ճաշարանի 32 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ շահառուների ծննդյան տարեդարձերի նշում, Տարեցների միջազգային օր, Աշուն, երկրաշարժի զոհերի հիշատակում, Ամանոր եւ Սուրբ ծննդյան օր, ղափամայի պատրաստում, այց «Սեւան» ազգային պարկի բնագիտական թանգարան և Սեւան քաղաքի «Բոհեմ» արվեստանոց-թեյարան, Ճամբարակի երաժշտական դպրոցում կազմակերպված մշակութային միջոցառում, ինչպես նաև Սևանի հոգևոր հովիվ տեր Ստեփանոսի և Ճամբարակի հոգևոր հովիվ տեր Ղևոնդի հետ տեղի ունեցած հանդիպումներին:
    - Կազմակերպվել է մեկ շահառուի հանգիստը «Ոսկե սերունդ» ճամբարում:
    - Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում մեկ շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 20 շահառուի համար՝ ճնշման չափում, 1 շահառուի համար՝ վերքի մշակում եւ փիրակապում:
    - 3 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Շահառուներին անվճար վարսավիրական ծառայությունների մատուցում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/aawmtf),
- Երգի խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oxkddd),
- Աշնանը նվիրված միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/bwfxfo, http://surl.li/klkzbr),
- «Բոհեմ» արվեստանոց-թեյարանում կազմակերպված մշակութային միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/kgaiey),
- Շահառուների այցելությունը «Սևան» ազգային պարկի բնագիտական թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/pooqqe),
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/heksae),
- Ղափամայի պատրաստման միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid09JDTtjG44MAcC18rEefZCnbsKpq1xbZxcUaUnPq9Bz2dmcaty3jZANYYNG2h3Rwwl&id=100080609350674, https://www.facebook.com/100080609350674/videos/524070457290124?st=5LHcc8k6h8D),
- Ձեռագործության խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ntevwu):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է տեղի ունեցել ՄՍԾ տարածքային կենտրոնի, համայնքապետարանի, առողջապահական կազմակերպությունների հետ՝ շահառուների հայտնաբերման և արդեն իսկ գրանցված շահառուների խնդիրների կարգավորման նպատակով:
Մարզում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի

շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 19 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 4 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 15 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 23 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Ժամանցի կազմակերպում<br>Բժշկական օգնություն<br>Լվացքի ծառայություն | 32<br>20<br>3 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «15» 12. 2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)